# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N2

**«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի և «Էկոբիլդինգ» ՍՊԸ-ի միջև 2024թ. հունվարի 29-ին կնքված N ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/5 ծածկագրով «Կապալային աշխատանքների կատարման» պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

**ք. Երևան** **« 9 » 04 2024թ.**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Էկոբիլդինգ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս «Էկոբիլդինգ» ՍՊԸ-ի տնօրեն Կաղեն Մինասյանի,** որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, համատեղ կոչվելով՝ Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև **2024թ. հունվարի 29-ին կնքված «ՀՀ Սյունիքի մարզի Շինուհայր բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման» աշխատանքների** պետական գնման **N ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/5** ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.14 կետերի դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի 5.1.1 կետի 2-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ.

«Կապալառուն ապահովում է շինարարության կազմակերպման աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումները՝ քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը»:

2. Պայմանագրի 5.1.1 կետի 5-րդ պարբերությունից հանել «Պայմանագրի 5.1.1 կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված և/կամ» բառերը:

3. Պայմանագրի 3.1.8 կետից հանել «Պայմանագրի 5.1.1 կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված և/կամ» բառերը:

4. Պայմանագրի 3.4.11 կետից հանել «Պայմանագրի 5.1.1 կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված և» բառերը:

5. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

6. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

7. Համաձայնագիրը կազմված է երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի տարածքային
զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900011051837
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Սարգիս Բաղինյան

---------------------------------
/ստորագրություն/

Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Էկոբիլդինգ» ՍՊԸ

Հասցե՝ ՎՁՄ, ք. Վայք,
Երկրաբանների փողոց 7
ՀՎՀՀ՝ 08914368
Հ/հ՝ 2500010890940100
Բանկ՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրեն
Կարլեն Մինասյան

---------------------------------
/ստորագրություն/

Կ.Տ